ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

ЦЕНТР ИССЛЕДОВАНИЙ И
СУДЕБНЫХ ЭКСПЕРТИЗ
«АНИКОМ» ООО

RESEARCH & JUDICIAL EXPERTISES CENTER «ANIKOM» LLC

Հասցե: ՀՀ, ք. Երևան-0005, Տիգրան Մեծի 65ա (37410) 57-75-41, (37410) 55-68-42, anikom-sa@mail.ru

№ Ա-24 Եվ 04/21/03

«25» «ապրիլի» 2024թ.

ՀՀ Ալավերդու համայնքապետարանի
ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանին

Հարգելի պարոն Ղումաշյան

Համաձայն 26.02.2024թ. ապրանքագիտական տեսակի փորձաքննությունների վճարովի ծառայության մատուցման թիվ ԱՊ02/24Ա-035 պայմանագրի ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության փորձագետի կողմից իրականացվել է ՀՀ Ալավերդու համայնքապետարանին պատկանող գույքերի արժեքի հետազոտություն:

Կից ներկայացվում է թիվ ԱՊ02/24Ա-035/1 փորձագետի եզրակացությունը բաղկացած՝ «12» տասներկու թերթից՝ շարադրված «9» ինը թերթից՝ շարադրված «9» ինը էջում, կից համակարգչային լուսանկարչական հավելվածը «02» երկու թերթից՝ պատկերատպված «02» երկու էջում, ընդամենը «32» երեսուներկու լուսանկարներով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ Տնօրեն՝ Ա.Ստեփանյան

Կատարող՝
փորձագետ՝ Պ.Գրիգորյանց
վկ.թիվ № 236 և № 273

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

Ք.Երևան-0005,Տիգրան Մեծի 65՝ հեռ 010577541 որակ.վկ.№ԱԳԳ193 և 229,211,212,239,298,273,243,244,0180 և 0337

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինձ (մեզ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության փորձագետ(ներ)՝ Պ.Վ.Գրիգորյանցիս, նույն ընկերության տնօրինության կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածին համապատասխան բացատրված են փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, որոնք նախատեսված են նույն օրենսգրքի 44 հոդվածով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության տնօրինության կողմից նախազգուշացված եմ (ենք) օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործման հետևանքով հայտնի դարձած կամ վստահված առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունը ապօրինի հրապարակելու համար ՀՀ քր. օր-ի 279 հոդվածով սահմանված պատասխանատվության մասին, եզրակացություն տալուց հրաժարվելու, խուսափելու համար ՀՀ քր. օր-ի 503 հոդվածով սահմանված պատասխանատվության մասին, ինչպես նաև կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քր. օր-ի 504 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ (ենք):

Փորձագետ(ներ) ՝ Պ.Վ.Գրիգորյանց

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թիվ՝ ԱՊ 02/24 Ա-035/1:

Ըստ՝ 26.02.2024թ. ապրանքագիտական տեսակի փորձաքննությունների վճարովի ծառայության մատուցման թիվ ԱՊ 02/24 Ա-035 պայմանագրի

Փորձաքննության տեսակը՝ Ապրանքագիտական:

Փորձաքննության հիմքը՝ ՀՀ Ալավերդու համայնքապետարանի ղեկավար՝ Դ.Ղումաշյանի հետ 26.02.2024թ. կնքված թիվ ԱՊ 02/24 Ա-035 պայմանագրը

Փորձաքննությունը սկսվել է՝ 26.02.2024թ.:

Փորձաքննությունն ավարտվել է՝ 25.04.2024թ.:

Փորձագետի երզակացությունը բաղկացած է՝ «9» ինը թերթից՝ շարադրված «9» ինը էջում, կից համակարգչային լուսանկարչական հավելվածը «02» երկու թերթից՝ պատկերատպված «02» երկու էջում, ընդամենը «32» երեսուներկու լուսանկարներով:

Տեղեկատվություններ փորձաքննությունը կատարող փորձագետ(ներ)ի մասին՝

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ ***մասնագիտացված փորձագիտական հաստատության գործունեության տեսակը*** –

Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն՝ շինարարատեխնիկական հետազոտություն՝ շինարարական օբյեկտների և դրանց հետ ֆունկցիոնալ կապված տարածքների հետազոտություն, այդ թվում նաև գնահատման նպատակով /որակավորման վկայական N239, N063, N243/, չափագրում (հաշվառում), գեոդեզիա, քարտեզագրություն, հողաշինարարության բնագավառ /որակավորման վկայական N 0180 և 0337/:

Դատաապրանքագիտական փորձաքննություն՝ անշարժ գույքի շուկայական գնահատում, ձեռնարկությունների հիմնական միջոցների գույքագրում և վերագնահատում, ապրանքագիտական հետազոտություն՝ արդյունաբերական /ոչ պարենային/ ապրանքների հետազոտության, ավտոապրանքագիտական փորձաքննություն՝ տրանսպորտային միջոցների հետազոտություն, այդ թվում

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

անց գնահատման նպատակով, Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի կողմից որակավորված, ԱՊՊԱ ոլորտում գույքային վնասների գնահատման իրավունքով (գնահատող-փորձագետ որակավորման վկայական №000 04), ապրանքագիտություն և ապրանքների որակի փորձաքննություն, ճյուղային ճարտարագիտություն, սննդարտադրության տեխնոլոգիա, շուկայաբանություն /մարքեթինգ/ և կադաստրային գործ /որակավորման վկայական №№211,244, 273, 297, 298/:

Բացի վերոգրյալ տեսակներից, նաև հաշվապահական, տնտեսագիտական, ավտոհետքաբանական, ավտոտեխնիկական, ավտոապրանքագիտական, ագրոապրանքագիտական, կենսաբանական, էկոլոգիական, նյութագիտական և այլ տեսակների փորձաքննություններ:

ՓՈՐՁԱԳԵՏ(ՆԵՐ)՝

Պյոտր Վարդանի Գրիգորյանց - ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության գնահատման փորձաքննությունների բաժնի պետ՝ բարձրագույն ինժեներատեխնիկական կրթությամբ, աշխատանքային 42 տարվա ստաժով, գնահատման աշխատանքների 28 տարվա ստաժով, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված 16-01 տեսակի՝(Արդյունաբերական (ոչ պարենային) ապրանքների, արդյունաբերության տարբեր ճյուղերի, օբյեկտների և արտադրանքի՝ շինարդյունաբերական՝ շինարարական կառույցների, հանքարդյունաբերական՝ հանքերի, գյուղարդյունաբերության օբյեկտների, կապակցված տարածքների և այլ հողատարածքների հետազոտություն, այդ թվում՝ որակային հատկանիշների և արժեքային ցուցանիշների որոշման նպատակով) դատաապրանքագիտական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ վկայական №273 և ՀՀ արդարադատության նախարարության դատական փորձագետի որակավորման հանձնաժողովի կողմից տրված շինարարատեխնիկական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ՝ անշարժ գույքի գնահատման հետազոտություն՝ վկայական № 236:

ՀԵՏԱԶՈՏՄԱՆՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԸ

Որքա՞ն է կազմում ՀՀ, Լոռու մարզ, Ալավերդու համայնքապետարանին պատկանող, հետազոտմանը ներկայացված օբյեկտների (թվով 5 հատ տրանսպորտային միջոցներ և թվով 2 հատ հատուկ տեխնիկա) շուկայական արժեքները, հետազոտման իրականացման ժամանակահատվածի դրությամբ:

ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՑՈՒՅՑ(ՆԵՐ)Ը

26.02.2024թ. վճարովի ծառայությունների մատուցման թիվ ԱՊ 02/24 Ա-035/2 պայմանագրին կից, նախաձեռնողի կողմից փորձագետի հետազոտմանն է տրամադրվել.

1. թվով 5 /հինգ/ միավոր տրանսպորտային միջոցները և թվով 2 /երկու/ միավոր հատուկ տեխնիկա:
2. հետազոտմանն ենթակա տրանսպորտային միջոցների և հատուկ տեխնիկայի հաշվառման վկայագրերի, տեխնիկական անձնագրերի, տեխնիկական զննության կտրոնների պատճենները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴԻԿԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԸ

1. Նախաձեռնողի կողմից առաջադրված հարցերը, վերլուծության /հետազոտման/ են ենթարկվել, կիրառելով տրամադրված փաստաթղթերում արտացոլված տվյալների, ինչպես

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

նաև հետազոտման ենթակա օբյեկտի ուսումնասիրմամբ, տեղազնընմամբ և այլ ձեռք բերված տվյալների, տվյալ բնագավառում գործող նորմատիվ ակտերով սահմանված պահանջների համադրման և համեմատման մեթոդները:

2. Նախաձեռնողի կողմից առաջադրված հարցերի հետազոտման /ուսումնասիրման/ ընթացքում կիրառվել են ստորև բերված նորմատիվ ակտերը, դրանք են՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք
- ՀՀ քրեական օրենսգիրք
- ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք
- Տեղեկատվական թերթերը և ամսագրերը, համապատասխան ինտերնետային կայքերը:
- Փորձագետի սեփական տեղեկատվական շտեմարան:
- Теория и практика судебной экспертизы №1 (9) 2008г.
- Исследование автомототранспортных средств в целях определения стоимости восстановительного ремонта и оценки (Методические рекомендации для судебных экспертов) Москва 2013:
- Теория и практика оценки", С.П. Коростелев, Маросейка, 2009:
- "Оценка рыночной стоимости машин и оборудования" Академия оценки.
- "Введение в оценку транспортных средств" Ю.В.Андрианов.
- Տվյալ ոլորտի մասնագետների հետ համապատասխան տվյալների ձեռքբերում և վերլուծություն:
- Համեմատական և ծախսային մեթոդներ:
- Շուկայի համակարգված դիտարկում /մոնիթորինգ/:

ԹՈՒՅԼԱՏՐՈՂ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տվյալ եզրակացությունը կազմված է՝ հաշվի առնելով հետևյալ թույլատրող և սահմանափակող պայմանները.

- Սույն եզրակացության առանձին մասերը չեն կարող մեկնաբանվել առանձին, այլ միայն ամբողջությամբ վերցված:
- Սույն եզրակացությունը հավաստի է միայն նրանում նշված նպատակների համար:
- Սույն եզրակացությունը կարող է օգտագործվել միայն ըստ նշանակության:
- Փորձագետը ոչ մի պատասխանատվություն չի կրում սոցիալական, տնտեսական, ֆիզիկական գործոնների և քաղաքացիական օրենսդրության փոփոխության համար, որոնք կարող են տեղի ունենալ նշված ամսաթվից հետո՝ այսպիսով ազդելով օբյեկտի շուրջ կատարված եզրահանգում ների վրա:
- Ելակետային տվյալները, որոնք օգտագործվել են եզրակացության մեջ, ստացվել են հավաստի աղբյուրներից և կամ նախաձեռնողի կողմից, բայց և այնպես փորձագետը չի կարող տալ հարյուր տոկոսանոց երաշխիք:
- Փորձագետը կատարել է փորձաքննության առարկա հանդիսացող, գույքի տեսողական զննում և պատասխանատվություն չի կրում օբյեկտի (ապրանքի) այն բնութագրերի և վիճակի համար, որոնք հնարավոր չէ հայտնաբերել արտաքինից տեսողական զննմամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

(Նկարագրությունը տրվում է հետազոտման ամսաթվի՝ 27.02.2024 թ.-ի դրությամբ)

2024թ. փետերվարի 26-ին ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության գրասենյակ է մուտքագրվել ՀՀ, Ալավերդու համայնքապետարանի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Հ.Ձավարյանի հայտը՝ ապրանքագիտական փորձաքննություն կատարելու վերաբերյալ: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ մասնագիտացված փորձագիտական հաստատության և ՀՀ, Ալավերդու համայնքապետարանի

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

միջև կնքվել է 26.02.2024թ. ապրանքագիտական տեսակի փորձաքննությունների վճարովի ծառայության մատուցման թիվ ԱՊ 02/24 Ա-035 պայմանագիր: Ծանոթանալով հիշյալ պայմանագրով փորձաքննությանն առաջադրված հարց(եր)ին և ուսումնասիրելով նախաձեռնողի կողմից տրամադրված փաստաթղթերի պատճենները պարզվեց, որ հետազոտման օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցները տեղում արտաքինից ակնադիտական հետազոտում իրականացնելու նպատակով անհրաժեշտ է փորձագետի ուսումնասիրությանը տրամադրել հետազոտվող օբյեկտները:

Փորձագետ(ներ)ը 2024թ. փետերվարի 27-ին ժամը մոտ 12:00-ի սահմաններում տեղազննության նպատակով գործուղմամբ իրականացրեց(ին) այցելություն ՀՀ, մարզ Լոռի, համայնք ք.Ալավերդի, համայնքապետարանի կոմունալ տնտեսության տարածք՝ որտեղ հանդիպեց(ին) նախաձեռնողի ներկայացուցիչ կոմունալ տնտեսության տնօրեն՝ Սարգիս Կիրակոսյանին, որն էլ մատնացույց արեց սույն փորձաքննության հետազոտման օբյեկտ հանդիսացող տրանսպորտային միջոցները և հատուկ տեխնիկա և տվեց բանավոր մեկնաբանություններ հետազոտվող գույքերի վերաբերյալ:

Հետազոտման առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցները փորձագետ(ներ)ի կողմից տեղազննվել է արտաքինից օրգանոլեպտիկ եղանակով զննման հետազոտման և լուսանկարահանման աշխատանքներ:

Փորձագետին առաջադրված հարց(եր)ի վերաբերյալ ուսումնասիրությունները և հետազոտությունները կատարվել են՝ նախաձերնողի կողմից տրամադրված հաշվառման վկայագրերի, տեխնիկական անձնագրերի, տեխնիկական զննության կտրոնների պատճեննում առկա և տեղազննությամբ՝ տեղում ուսումնասիրմամբ ձեռք բերված տվյալների համեմատում, ինչպես նաև կիրառվել են ՀՀ քաղաքաշինության տվյալ բնագավառում գործող նորմերի պահանջներով սահմանված տվյալների համադրման և համեմատման մեթոդները:

Լուսանկարումը իրականացվել է «Samsung» մակնիշի Galaxy A 32 տիպի, SM-A325F/DS մոդելի, 64 GB հիշողության քարտով, 64.0 մեգապիկսել կետայնությամբ թվային մակրոտեսա-լուսանկարչական խցիկով՝ կիրառելով Timestam p Camera ծրագիրը (տես սույն փորձագետի եզրակացության կից համակարգչային լուսանկարչական հավելվածը):

Հետազոտման ներկայացված բոլոր գույքերը՝ օգտագործված, շահագործումից հանված, մեծ աստիճանի կուտակվաց մաշվացեցուն ունեցոխ տրանսպորտային միջոցներեն և հատուկ տեխնիկա: Ապրանքագիտական հետազոտությունը իրականացվել է հետազոտմանը տրամադրված նյութերում առկա և ուսումնասիրմամբ ձեռք բերված տվյալների հիման վրա՝ կիրառելով տվյալ բնագավառում գործող համեմատման և համադրման մեթոդները:

Հետազոտվող գույքերի համառոտ բնութագրերը

1.«Gaz 31105-120» (942 CQ 61)

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, տրանսպորտային միջոցը «Gaz 31105-120» մակնիշի, 942 CQ 61 հաշվառման համարանիշով, բաց փիրուզագույն (կանաչ) գույնի, որը համապատասխանում է YB209141 հաշվառման վկայագրում առկա տվյալներին: Ըստ YB209141 հաշվառման վկայակագրում առկա տվյալների տրանսպորտային միջոցը 2005թ. արտադրության է, 97/132 կվտ/ձ.ու. շարժիչի հզորությամբ, սեդան թափքի տեսակով, մեխանիկական փոխանցման տուփով, «X9631105051269638» նույնացման համարով, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:

Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, թեթև մարդատար տրանսպորտային միջոցն ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Տրանսպորտային միջոցը հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Անվադողերը՝ հնամաշ, անվահեծ երը՝ պատված կոռոզիայով, փոխարինման ենթակա: Ավտոմեքենայի վրա առկա էին քերծված, գունաթափված, դեֆորմացված, ինչպես նաև կոռոզիայով պատված հատվածներ: Տրանսպորտային միջոցի սրահը գտնվում է անբավարար վիճակում, ունի շահագործողական մեծ մաշվածություն: Շարժիչի բլոկի վրա առկա էին ճաքեր և տվյալ վիճակով հնարավոր չէ շահագործել՝ անհրաժեշտ է վերանորոգում կամ փոխարինում: Բացակայում էին հովհացման, ձայնարկիչի և այլ կարգավորիչները, մարտկոցը: Դիմապակին գտնվում էր վնասված վիճակում: Ընթացային մասը մասամբ գտնվում է անբավարար վիճակում՝ անհրաժեշտ է վերանորոգում և որոշ դետալների և/կամ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

հանգույցների փոխարինում: Ըստ ներկայացուցիչի բանավոր հայտարարությունների համաձայն մեքենան գրեթե 5 տարի չի շահագործվել, գտնվել է բաց երկնքի տակ, անձրևների, կարկուտի և այլ բնակլիմայական պայմանների ուղիղ ազդեցոեցության ներքո, որոնց հետքերը երևում են անզեն աչքով թափքի, ինչպես նաև դիմապակու մակերևույթի վրա:
Տրանսպորտային միջոցը հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

2.«Mitsubishi Pajero 2.4» (038 CT 61)

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, տրանսպորտային միջոցը «Mitsubishi Pajero 2.4» մակնիշի, 038 CT 61 հաշվառման համարանիշով, կանաչ մետաղական-արծաթափայլ գույնի, որը համապատասխանում է YB195530 հաշվառման վկայագրում առկա տվյալներին: Ըստ YB195530 հաշվառման վկայակագրում առկա տվյալների տրանսպորտային միջոցը 1997թ. արտադրության է, 140/190 կվտ/ձ.ու. շարժիչի հզորությամբ, ունիվերսալ թափքի տեսակով, ավտոմատ փոխանցման տուփով, «V25-4404278» նույնացման համարով, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:

Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, թեթև մարդատար տրանսպորտային միջոցն ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Տրանսպոր-տային միջոցը հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Անվադողերը՝ հնամաշ, անվահեծերը՝ պատված կոռոզիայով, փոխարինման ենթակա: Ավտոմեքենայի վրա առկա էին քերծված, գունաթափված, դեֆորմացված, ինչպեսնաև կոռոզիայով պատված հատվածներ: Տրանսպորտային միջոցի սրահը գտնվում է անբավարար վիճակում, ունի շահագործողական մեծ մաշվածություն: Տրանսպորտային միջոցը երեք դռնանի է (կուպե), չորս քաշող: Շարժիչը ապակոմպլեկտավորված և քանդված, որոշ մասը գտնվում էր շարժիչի խցիկում, իսկ որոշը՝ սրահում: Հովիացման համակարգը ապամոնտաժված՝ գտնվում է սրահում: Բացակայում էին շարժիչի էլեկտրահամակարգը: Ըստ ներկայացուցիչի բանավոր հայտարարությունների համաձայն փոխանցման տուփը ենթակա է վերանորոգման, իսկ կապող սկավառակը՝ փոխարինման: Մեքենան եղել է աջակողմյան կառավարմամբ, սակայն փոխարինվել է ձախակողմյանի: Ղեկային համակարգը ենթակա է վերանորոգման: Առջևի կախոցը և մեղմիչները ենթակա են վերանորոգման կամ փոխարինման: Դիմապակին գտնվում էր վնասված վիճակում: Ըստ ներկայացուցիչի բանավոր հայտարարությունների համաձայն մեքենան գրեթե 5 տարի չի շահագործվել, գտնվել է բաց երկնքի տակ, անձրևների, կարկուտի և այլ բնակլիմայական պայմանների ուղիղ ազդեցոեցության ներքո, որոնց հետքերը երևում են անզեն աչքով թափքի, ինչպես նաև դիմապակու մակերևույթի վրա: Հրակ է նշել նաև, որ մեքենայի վրա առկա էր մեթան գազի տարողություն՝ 2.0լ ծավալով:
Տրանսպորտային միջոցը հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

3.«ԳԱԶ» 48321-10 աղբատար (892 SU 36)

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, տրանսպորտային միջոցը «ԳԱԶ» 48321-10 մակնիշի (ԳԱԶ ՍԱԴԿՈ), 892 SU 36 հաշվառման համարանիշով, որը համապատասխանում է ՎՍ թիվ 678816 տեխնիկական անձնագրում առկա տվյալներին: Ըստ ՎՍ թիվ 678816 տեխնիկական անձնագրում առկա տվյալների տրանսպորտային միջոցը 2006թ. արտադրության է, շարժիչի համարը Д245.7Е2 205329, աղբատար թափքի տեսակով թիվ 33070060102522, բեռնատար թափքի տիպով, հենասարքի համարը 33090060902359, նույնացման համարը XVL48321360000503, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:
Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, բեռնատար տրանսպորտային միջոցն ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Տրանսպորտային միջոցը հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Շարժիչը ապամոնտաժված է, բլոկը ճաքած, գտնվում է մեքենայի կողքը, փոխանցման տուփը ըստ բանավոր հայտարարության ենթակա է հիմնանորոգման, իսկ կապող սկավառակը փոխարինման՝ ապամոնտաժված են և գցած մեքենայի տակ, անիվները և անվահեծերը՝ բացակայում են,

ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

մարտկոցը բացակայում է, սրահը վատ վիճակում, իրանը վնասված, գունաթափված և դեֆորմացված հատվածներով, մեքենայի հանգույց-համակարգերը ամբողջովին բացակայում են: Ըստ բանավոր հայտարարության տրանսպորտային միջոցը 6-7 տարի չի շահագործվել
Տրանսպորտային միջոցը հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:
Տրանսպորտային միջոցը հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

4.«ԳԱԶ» 48321-10 աղբատար

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, տրանսպորտային միջոցը «ԳԱԶ» 48321-10 մակնիշի (ԳԱԶ ՍԱԴԿՈ), տեխնիկական անձնագիրը բացակայում է, սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:
Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, բեռնատար տրանսպորտային միջոցն ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Տրանսպորտային միջոցը հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Ընթացային մասը և շարժիչը ամբողջովին ապամոնտաժված են և բացակայում են, սրահը՝ ապամոնտաժված և ապակոմպլեկտավորված, առկա է սրահի միայն դեֆորմացված հատվածամասը, թափքը գցած կողքի վրա: Ըստ բանավոր հայտարարության տրանսպորտային միջոցը 2006թ. արտադրության է և 6-7 տարի չի շահագործվել:

5.«ԳԱԶ» 3308 բեռնատար–ինքնաթափ

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, տրանսպորտային միջոցը «ԳԱԶ» 3308 մակնիշի (բեռնատար–ինքնաթափ), տեխնիկական անձնագիրը բացակայում է, սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:
Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, բեռնատար–ինքնաթափ տրանսպորտային միջոցն ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Տրանսպորտային միջոցը հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Շարժիչը, փոխանցման տուփը, անիվները և անվահեծերը, դիմապակին, ինչպես նաև մյուս համակարգերը ապամոնտաժված են և բացակայում են, մեքենան գտնվում է դեֆորմացված, գունաթափված, կոռոզիայով պատված վիճակում, սպիտակ գույնի: Ըստ բանավոր հայտարարության տրանսպորտային միջոցը 2006թ. արտադրության է և 6-7 տարի չի շահագործվել:
Տրանսպորտային միջոցը հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

6.«ՅՈՄԶ 6» (88-06 ԱԽ)

Տեղազննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, հատուկ տեխնիկան (տրակտոր) «ՅՈՄԶ 6» մակնիշի, 88-06 ԱԽ պետական համարանիշով, որը համապատասխանում է թիվ 002141 տեխնիկական զննության կտրոնում առկա տվյալներին: Ըստ թիվ 002141 տեխնիկական զննության կտրոնում առկա տվյալների հատուկ տեղնիկանը 1985թ. արտադրության է, շարժիչի համարը 4M2935, գործարանային համարը 387068, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:
Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, տրակտորը ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Հատուկ տեխնիկան հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Ընթացային մասը, շարժիչը և լրակազմող դետալները առկա են սակայն պատված կոռոզիայով և գտնվում են վատ վիճակում, ենթակա են վերանորոգման կամ փոխարինման, անիվները ունեն 100%–ոց մաշվածություն ճնշազրկված, թափքը դեֆորմացված, կորոզիացված, որոշ դետալներ բացակայում են, սրահը գտնվում է անբավարար վիճակում, ըստ բանավոր հայտարարության 7-8 տարի չի շահագործվել:
Հատուկ տեխնիկան հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԳԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

7.«JCB 3D» (0206LS)

Տեղեկությամբ ձեռք բերված տվյալների համաձայն, հատուկ տեխնիկան (էկսքավատոր-ամբարձիչ) «JCB 3D» մակնիշի, 0206LS պետական համարանիշով, տեխնիկական վկայականը բացակայում է, որը սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ ԼՄ Ալավերդու Համայնքապետարանին:

Ըստ արտաքին ակնադիտական հետազոտման, տրակտորը ունի ընդհանուր առմամբ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ: Հատուկ տեխնիկան հետազոտման պահին գտնվում էր ոչ աշխատանքային վիճակում: Էկսքավատոր-ամբարձիչի շարժիչը ապամոնտաժված, վերանորոգման կամ փոխարինման ենթակա, դեղին գույնի, ընթացային մասերը ենթակա են վերանորոգման կամ փոխարինման, որոշ դետալներ բացակայում են, ընդհանուր վնասված, գունաթափված և դեֆորմացված հատվածներով, շերեփը և հարթ շերեփը /ատվալը/ ապամոնտաժված, ատամները կոտրված, ընդհանուր առմամբ հատուկ տեխնիկան ենթակա է հիմնավերանորոգման, ըստ բանավոր հայտարարության 8-10 տարի չի շահագործվել:

Հատուկ տեխնիկան հետազոտման կատարման ժամանակ ուներ անբավարար ապրանքային տեսք և տեխնիկական վիճակ, առկա են վերանորոգման և փոխարինման համար անհրաժեշտ դետալներ և հանգույցներ՝ պահանջվում է մասնագետի միջամտություն:

Շուկայական արժեքի բացահայտում (որոշում)

Շուկայական արժեքը որոշելու համար մեր կողմից ուսումնասիրվել են ՀՀ ավտոշուկաների և հատուկ տեխնիկայի գնային առաջարկները, օգտվել ենք www.auto.am, www.list.am և այլ կայքերից ու լրատվական միջոցների ինֆորմացիայից, ըստ որոնց հետազոտման արդյունքների վերլուծության, նմանատիպ ապրանքների առաջարկ-շուկայական արժեքները ըստ փորձաքննության ներկայացված ապրանքի և կամ մոտ ֆիզիկատեխնիկական վիճակի (այդ թվում աշխատանքային ռեսուրսի, վազքի և բեռնաբարձողունակության) և այլ բնութագրիչների, վերցված են նույնատիպ և նույնաբովանդակ ապրանքների վաճառողների կողմից առաջարկվող գների միջինացված արժեքները: Քանի որ որպես բազային ելակետային տվյալ ընդունված են տարբեր ֆիզիկատեխնիկական վիճակի ապրանքների արժեքները, ուստի կիրառվելու է համանմանեցման գործակից հետազոտվող յուրաքանչյուր ապրանքատեսականուն համապատասխան: Համանմանեցման (կուտակված մաշվածության) գործակիցը ցույց է տալիս, թե ինչքան ծախս է պահանջվում հետազոտվող և անալոգ ապրանքների (օբյեկտի) ֆիզիկական վիճակը համապատասխանեցնելու համար: Կօգտագործվի նաև լիկվիդացիոն (սակարկության) գործակից: Լիկվիդացիոն գործակիցն ապահովում է հետազոտվող գույքի արժեքի գրավչությունը, հաշվի է առնում ազատ շուկայի առաջարկի սակարկությունը տվյալ պահի դրությամբ, նմանատիպ բաղկացուցիչ մասերից կազմված, նմանատիպ օբյեկտների համեմատությամբ և հաշվի է առնում տվյալ տեսականու և նրա ֆիզիկատեխնիկական տվյալների նկատմամբ շուկայի առաջարկն ու պահանջարկը: Գործակիցներն արտահայտում են փորձագետի պրոֆեսիոնալ կարծիքը, որը հիմնված է համապատասխան նմանատիպ ապրանքների վերանորգման և առք ու վաճառքով զբաղվող մասնագետների կարծիքների վերլուծության, համացանցում կատարված վերլուծության, խորհրդատվության և բանավոր հարցազրույցների ուսումնասիրության հիման վրա:

Քանի որ ապրանքագետ-փորձագետի կողմից կատարվել է նշված յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի կամ հատուկ տեխնիկայի արտաքինից անզեն աչքով ակնադիտական հետազոտություն, հետազոտությունը կատարվել է ստատիկ վիճակում, որպիսի պայմաններում հնարավոր չէ հայտնաբերել ավտոմեքենայի ընթացային մասերի, հանգույցների և ագրեգատների տեխնիկական վիճակը, որը նաև դուրս է ապրանքագետ-փորձագետի հետազոտման տիրույթից (տվյալ պարագայում պահանջվում է ավտոտեխնիկի եզրակացություն):

1.«Gaz 31105-120» (942 CQ 61)

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ տ/մ-ների առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 450000-650000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 550000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.6 և սակարկության 0.75 գործակից

ԵՎ ԳԱՆՁԱԳՈՒՄ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

կստացվի 247500.0 ՀՀ դրամ, ընդունվում է 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 2005թ. արտադրության, «Gaz 31105-120» մակնիշի, 942 CQ 61 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2.«Mitsubishi Pajero 2.4» (038 CT 61)

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ տ/մ-ների առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1600000-2400000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 2000000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.6 և սակարկության 0.85 գործակից կստացվի 1020000.0 ՀՀ դրամ, ընդունվում է 1000000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 1997թ. արտադրության, «Mitsubishi Pajero 2.4» մակնիշի, 038 CT 61 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

3.«ԳԱԶ» 48321-10 աղբատար (892 SU 36)

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ տ/մ-ների առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1800000-2600000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 2200000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.6 և սակարկության 0.75 գործակից կստացվի 990000.0 ՀՀ դրամ, ընդունվում է 1000000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 2006թ. արտադրության, «ԳԱԶ» 48321-10 աղբատար մակնիշի, 892 SU 36 հաշվառման համարանիշով ավտոմեքենայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

4.«ԳԱԶ» 48321-10 աղբատար

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ տ/մ-ների առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1800000-2600000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 2200000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.3 և սակարկության 0.75 գործակից կստացվի 495000.0 ՀՀ դրամ, ընդունվում է 500 000.0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 2006թ. արտադրության, «ԳԱԶ» 48321-10 աղբատար մակնիշի, ավտոմեքենայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 500 000.0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.«ԳԱԶ» 3308 բեռնատար-ինքնաթափ

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ տ/մ-ների առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1000000-1600000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 1300000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.6 և սակարկության 0.75 գործակից կստացվի 585000.0 ՀՀ դրամ, ընդունվում է 600 000.0 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 2006թ. արտադրության, «ԳԱԶ» 3308 բեռնատար-ինքնաթափ մակնիշի, ավտոմեքենայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 600 000.0 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

6.«ЮМЗ 6» (88-06 АХ)

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ հատուկ տեխնիկայի առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1000000-1700000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 1350000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.7 և սակարկության 0.85 գործակից կստացվի 803250.0 ՀՀ դրամ, ընդունվում է 800 000.0 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Այսպսիով, հետազոտմանը ներկայացված 1985թ. արտադրության, «ЮМЗ 6» մակնիշի, տրակտորի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 800 000.0 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ «ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ

7.«JCB 3D» (0206LS)

Ըստ հետազոտման արդյունքների վերլուծության նմանատիպ հատուկ տեխնիկայի առաջարկ-շուկայական արժեքները տատանվում են 1300000-2100000 ՀՀ դրամի սահմաններում, որը միջինացնելով ընդունվում է 1700000.0 ՀՀ դրամ: Կիրառելով համանմանեցման 0.7 և սակարկության 0.85 գործակից կստացվի 1011500.0 ՀՀ դրամ, ընդունվում է 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Այսպիսով, հետազոտմանը ներկայացված «JCB 3D» մակնիշի, էկսքավատոր-ամբարձիչի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝ 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Ապրանքագետ-փորձագետ՝ Պ.Վ.Գրիգորյանց

Այսպիսով, վերլուծելով կատարված հետազոտությունները և ընդհանրացնելով կատարված վերլուծությունների արդյունքները ու վերջիններս ամփոփելով, փորձագետ(ներ)ը եզրահանգեց(ին) հետևյալին.

ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարց Որքա՞ն է կազմում ՀՀ, Լոռու մարզ, Ալավերդու համայնքապետարանին պատկանող, հետազոտմանը ներկայացված օբյեկտների (թվով 5 հատ տրանսպորտային միջոցներ և թվով 2 հատ հատուկ տեխնիկա) շուկայական արժեքները, հետազոտման իրականացման ժամանակահատվածի դրությամբ:

Պատասխան.

Հետազոտմանը ներկայացված թվով 5 հատ տրանսպորտային միջոցների և թվով 2 հատ հատուկ տեխնիկայի բացահայտված հավանական շուկայական արժեքը, առ 01.04.2024թ. դրությամբ, կազմել է՝

1.«Gaz 31105-120» (942 CQ 61) – 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2.«Mitsubishi Pajero 2.4» (038 CT 61) – 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

3.«ԳԱԶ» 48321-10 աղբատար (892 SU 36) – 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

4.«ԳԱԶ» 48321-10 աղբատար – 500 000.0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.«ԳԱԶ» 3308 բեռնատար-ինքնաթափ – 600 000.0 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

6.«ԻՕՄԶ 6» (88-06 AX) – 800 000.0 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

7.«JCB 3D» (0206LS) – 1 000 000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Ապրանքագետ-փորձագետ՝ Պ.Վ.Գրիգորյանց
վկայականներ № 236 և № 273

Հետգրություն: Վերը բերված հետևությունները հիմնված են հետազոտությունը իրականացնելու մասին դիմում-հայտով առաջադրված ելակետային տվյալների և տրամադրված նյութերի հետազոտության վրա՝ առանց այդ տվյալների և նյութերի հավաստիությունն ու թույլատրելիությունը երաշխավորելու, քանզի նման գնահատումը բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված մարմինների լիազորությունների մեջ է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
«ԱՆԻԿՈՄ» ՍՊԸ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ
№ ԱՊ 02/24 Ա-035/1 ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ ԸՆԴԱՄԵՆԸ 32 (ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ) ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ

Լուսանկար N1.

Լուսանկար N2.

Լուսանկար N3.

Լուսանկար N4.

Լուսանկար N5.

Լուսանկար N6.

Լուսանկար N7.

Լուսանկար N8.

Լուսանկար N9.

Լուսանկար N10.

Լուսանկար N11.

Լուսանկար N12.

Լուսանկար N13.

Լուսանկար N14.

Լուսանկար N15.

Լուսանկար N16.

Լուսանկար N17.

Լուսանկար N18.

Լուսանկար N19.

Լուսանկար N20.

Լուսանկար N21.

Լուսանկար N22.

Լուսանկար N23.

Լուսանկար N24.

Լուսանկար N25.

Լուսանկար N26.

Լուսանկար N27.

Լուսանկար N28.

Լուսանկար N29.

Լուսանկար N30.

Լուսանկար N31.

Լուսանկար N32.

Փորձագետ՝ Պ.Գրիգորյանց